

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

29.04.2022 20:05



Այսօր՝ 2022 թվականի ապրիլի 29-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում հյուրընկալել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպված «Փաստաբանությունն ինտեգրացիոն գործընթացների համատեքստում. հեռանկարներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողովի պատվիրակություններին՝ ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի գլխավորությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսել է հայ ժողովրդի կյանքում եկեղեցու առանցքային նշանակության մասին: Նա նաև նշել է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է ազգային ու հոգևոր արժեքների կրողն ու հայի ինքնության կերտողը՝ պետականության բացակայության պայմաններում ստանձնելով հայորդիների իրավունքների և քրիստոնեական հավատքի պաշտպանությունը:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հիշատակել է Հայաստանի ու Արցախի առջև ծառայած մարտահրավերները և հույս հայտնել, որ ներկա փաստաբանները միջազգային հարթակներում կպաշտպանեն հայ ժողովրդի արդար իրավունքները:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը շնորհակալություն է հայտնել միջազգային համաժողովին մասնակից փաստաբանների պատվիրակություններին Վեհարանում հյուրընկալելու համար:







```
BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```